



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁԻ ՕՐԱԳՐԻԾ



ույանքի մեջ շողում է Սպենդիարտի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի Պետական Թատրոնի հոյակապ ջենքը: Բաց շականակազույն պարկետը, կաթնագույն սյուների ու նրանց վրանստած հայկական ոճի դեղաքանդակ խոյակներն ու գեղահյուս սյուների զանազան ուղղոված են ծիրանավառ ռակեիտը մուժտվ: Ենթաբարձրում է մի հսկայական սրտի պես:

Տեղի պիտի ունենա աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը, պարտիական-հասարակական կազմակերպությունների ու Սովետական Բանակի զորամասերի ներկայացուցիչների հետ համատեղ, նվիրված Սովետական Հայաստանի 26-րդ տարեդարձին:

Սովետական Հայաստան: Անուն՝ որ հպարտ պիտի հնչե իր 26-ամյա պանծալի, տքնաջան ուղիով ու հաղթանակներով:

Ահա՛ և նրանք, որոնք կերտել, ստեղծել են մեր օրեօր հզորացող հայրենիքը, մեր սրբազան հողի միշտ լավատես, աննկուն, զոհաբերող զավակները՝ արդյունաբերական ձեռնարկությունների, արանսպորտի, ողջ ժողովրդական տնտեսության ղեկավարները, բրոնզադեմ ստախանովականները և գիտության, արվեստի ու գրականության աշխատողները:

Ահա և նրանց կողքին, ձուլված այս հազարահանդես տոնական ամբողջությանը, ներգաղթած հայերի ներկայացուցիչները, պանծալի հայրենիքի 26-րդ տարեդարձի տոնակատարությանը առաջին անգամ մասնակցելու սրբազան դոդով:



Բարձր է հնչում լեզուն հայոց: Հանդիսավոր նիստը որոտընդոտ ծափերի տակ բաց է անում աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային գործկոմի նախագահ Լ. Հովսեփյանը:

Այժմ ամբողջ դահլիճն իր հայացքը հանել է կարմրավառ, ռակեգիր լողունգներով զարդարուն բեմում, Առաջնորդի լուսաշող արձանի ֆոնի վրա երևացող նախագահության պատկանելի սեղանին:

Այնտեղ են ընկ. ընկ. Գրիգոր Հարությունյանը, Ա. Սարգսյանը, Ս. Միքայելյանը, Ա. Քոչինյանը, Զ. Գրիգորյանը, Ե. Առուշանյանը, Բ. Աստվածատրյանը և հայոց քնարի մեծ վարպետ Ավետիք Իսահակյանը:

Դահլիճում տիրող բերկրանքն ու ոգևորությունը հասնում են իրենց գագաթնակետին, երբ հիշատակվում է ժողովուրդների Առաջնորդ Մեծ Ստալինի անունը: Հուտրուկայա, բուռն ծափահարություններով դղրդացնում են հայ ճարտարապետության այս շքեղ ձեռակերտը, երբ լսվում է հայ ժողովրդի լավագույն բարեկամ և փրկիչ, Սովետական Միության Գեներալիսսիմոս Իսսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի հարազատ, ոգեշնչող անունը:

Զլուղ ծափերի տարափի տակ պատվավոր նախագահության կազմում ընտրվում է Համկ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոն Մեծ Ստալինի գլխավորությամբ:

Դահլիճը մի մարդու պես լսում է Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու 26-րդ տարեդարձի մասին Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի պրոպագանդա-

դալի և ապիտացիայի բաժնի վարիչի տեղա-
կալ Ա. Հարությունյանի ղեկուցումը:

Ձեկուցողը մանրամասն նկարագրում է
Լենինի-Ստալինի հերոսական պայտիայի
ղեկավարութեանը հայ ժողովրդի անցած
26-ամյա փառապանծ տղին:

Դժվարություններով լի է եղել այդ ուղին,
բայց միշտ պսակված մեր հերոսական
ժողովրդի պատմական աննկուն կամքի
դափնեպսակներով: Հպարտանում ես, որ
ծնվել ես հայ և որ քո կյանքը դուզադիպել
է այս անմահ դարասկզբին:

Միահամուռ կիրպով ընդունվում է ող-
ջունի նամակի տեքստն՝ ուղղված հանճա-
րեղ Առաջնորդին: Նորից ու նորից ծովացող
ծափահարություններ: Բոլորը ոտքի վրա են,
դահլիճը բուռն օվացիա է սարքում Կ պա-
տիվ սրբելի ուսուցիչ Մեծ Ստալինի: Նվա-
զախումբը կատարում է Հայկական ՍՍԻ
Պետական հիմնը՝ խրոխտ ու ողեշնչող:

Էլեկտրականացած դահլիճը, փնչպես մի
հակայական սիրտ հևում է տենդորեն:

«Ա՛հ, մի՛թե բառ կամ խոսք ունի,
Արշալույսը, որ կրոնկի,
Ձի անհո՛ւն է...»

Թվում է թե այդ են մրմնջում ներգաղ-
թած հայերի շրթերն այդ բոպեին...

Անհո՛ւն ես, Սովետական Արշալույս,
սովետական ազա՛տ աշխարհ...»

Մայրաքաղաքի լավագույն արտիստական
ուժերը: Հաղարահանդես երեկոն այժմ նկու-
վել է հայոց քնարի և սրտի հմայիչ, հոգե-

կան ժառանգութեան բյուրեղային աշ-
խարհը:

Համե՛րպ: Այս ամբողջ Սովետական Հա-
լաստանն է երգում, այս ամբողջ հայ ժո-
ղովուրդն է, որ ծովացել է մի սրտի մեջ:

Իսկ այդ սիրտը նո՛ր է, վերածնված, շկա՛-
նրա մեջ անցյալի մոմտուն ու ցավը: Փյու-
նիկի պես մոխիրներից ծնված սովետական
հզորացող նոր հայ ժողովուրդը արևն ի վեր
թնդացնում է իր երջանիկ կյանքի արտա-
ցումը, նոր երջանիկ երգը, որ ելնում է
ուսկեծփուն դաշտերի, գործարանային շշակ-
ների, դաղգյաճների և դիտութեան լուսե-
ղեն հալոտատությունների սրտից...

«Մուսի ձեռքից բռնել ամուր և անբաժան
եվ հավատալ նրա եղբայրության—
Այդ մեր նախնիքը մեզ կտակեցին,
Հայրենակեզ մարգարեները մեր,
Անհայտ կորած և հավիտյան ներկա այն
վեհ Քանաքեռցին»

Որ բարձրացավ ազատ Մասիսն Կ վեր...»
Հայ ժողովրդի նամակը... կատարումը
խորն է ու հուզիչ...

Դա հայ սրտի խոսքն է բոլոր աշխարհ-
ներին, բոլոր տառապած ժողովուրդներին և
հայրենիքի զարնանաշունչ սեմը երազող
բոլոր հայրենաբաղձ հայերի:

«Եղբայրներս տուն պիտ գան...»

Լենինյան-Ստալինյան պանծալի պար-
տիայի և Մեծն Ստալինի հայրական խը-
նամբով փրկված, այլևս աբստաղրված հայ
ժողովուրդը, մեր սրբազան հոգն ու կու-
տուրան այդ են պահանջում:

26-ամյա Սովետական բարգավաճ հայ-
րենիքս պանդուխտի երգ չպիտի ունենա
այլևս:

